Մրցույթ՝ ՀՀ «Լոռու մարզի Մեծ Պարնու ակադեմիկոս Մ.Մելքոնյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տեխնոլոգիայի (3 դասաժամ), ինֆորմատիկայի (4 դասաժամ),երգ երաժշտության (2 դասաժամ), քիմիայի (5 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման եւ հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:
Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

-դիմում (Ձև 1),
- մեկ լուսանկար 3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (Ձև 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:
Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչև սեպտեմբերի 25-ը ներառյալ,ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը բացի շաբաթ,կիրակի և այլ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա սեպտեմբերի 28-ին **՝ժամը 14:00 -ին**, ՀՀ Լոռու մարզի Մեծ Պարնու ակ.Մ.Մելքոնյանի անվան միջնակարգ դպրոցում: Հասցեն՝Լոռու մարզ, գ. Մեծ Պարնի 1-ին փողոց 76 շենք:

Տեղեկությունների համար զանգահարել (077) 06-41-91 հեռախոսահամարով: